*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Սյունիք բնակավայրի գյուղամիջյան ճանապարհի նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման** նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/06 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մայիսի 11-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/06 ծածկագրով գնման պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված աշխատանքների չկատարում

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, Կնքված պայմանագիր, ՀՀ կառավարության 28.12.2023թ, թիվ 2340-Ա որոշում

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՅՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆՈՐՈԳՄԱՆ և ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ *կատարման***
**«11» մայիսի 2023թ. կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/06»**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Կապան «29» դեկտեմբեր 2023թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ապառաժ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Ավետիսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2340-Ա որոշումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի փոփոխությունը:

1.2. Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է հանդիսանում 2024թ. նոյեմբերի 1-ը:

1.3.Պայմանագրի Օրացուցային գրաֆիկը /Հավելված 2/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:

1.4.Պայմանագրի Վճարման ժամանակացույցը/Հավելված 3/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:

1.5.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Կապանի համայնքապետարան | <<Ապառաժ>> ՍՊԸ |
| Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա | Ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <<Ամերիաբանկ>> ՓԲԸ |
| ՀՀ 900312512040/համայնք/ | ՀՀ 15700-04636690100 |
| ՀՀ 900312000491/սուբվենցիա, բյուջե/ | ՀՎՀՀ 00440378 |
| ՀՎՀՀ 09426088 | |
| ------------------------------------- (ստորագրություն) Կ.Տ. | ------------------------------------- (ստորագրություն) Կ.Տ. |